Ա. Գ. ԳԱԼԻԿՅԱՆ

(Մայր Աթոռի գլխավոր ճարտարապետ)

ԺԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ-ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՄԵՐՈՒՄ

Հայ ժողովուրդը հնագույն ժամանակներից ճարտարապետության ասպարեզում հայտնի է իր սքանչելի ավանդություններով։ Դարերն անցել են, ժամանակները փոխվել, սակայն հայի որոնող միտքը չի դադարել իր ստեղծագործ, շինարար ոգուց։

Ով շրջել է Հայաստանում, տեսել է նրա հիասքանչ բնությունը, իր այնքան բարեբեր այգիներով, խոր ձորերով, արագավազ գետակներով, հսկա լեռներով և նրանցից բխող սառն ու ջինջ աղբյուրներով, ապա նա տեսել է նաև բազմաթիվ հուշարձաններ, ճարտարապետական կոթողներ, որոնք իրենց վեհությամբ կարծես այդ բնության շարունակությունը լինեն, նրա պակը։ Այդ հուշարձանները մեծ մասամբ վանքեր են, եկեղեցիներ ու տաճարներ։ Նրանք բոլորն էլ քարաշեն են, լուռ բայց ուշագրավ։ Ոչ ոք չի կարող անտարբեր անցնել նրանց կողքով. նրանք կարծես ձգողական ուժ ունեն, երբ մոտենում եք, նրանց սրբատաշ քարերը կարծես լեզու են առնում ու պատմում... Ոչ ոք այնքան խոր, ճշմարիտ և անկաշառ չի վերարտադրի հայ հերոսական ժողովրդի բազմադարյան պատմությունն ու մշակույթը ինչպես այդ լուռ քարերը։

Այսօր մենք ականատես ենք լինում մեր Հայրենիքի աննախընթաց շինարարության ոգեշնչող վերելքին։ Ամենուրեք բարձրանում են նոր շենքեր ու կառույցներ, կարծես մեր ողջ երկիրը շինարարական մի հսկա հրապարակ լինի։ Այդ բազմաբովանդակ նորակառույցներում մենք հաճույքով տեսնում ենք հայ ճարտարապետության ավանդությունները; նրան յուրահատուկ ոճի զարգացումը։ Մեզ՝ ճարտարապետներիս համար, մեր անցյալի լավագույն հուշարձանները ստեղծագործության անսպառ աղբյուր են հանդիսանում։

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Ճարտարապետական գործերի և հուշարձանների պահպանության վարչությունը, սովետական իշխանության առաջին իսկ օրերից, հայ ճարտարապետական հուշարձանների պահպանության և վերականգնման ասպարեզում, սիստեմատիկ և անգնահատելի աշխատանք է կատարում։

Ճարտարապետական հուշարձանների մի զգալի մասը կազմում են մեր հին եկեղեցիները, վանքերն ու տաճարները, ինչպես օրինակ՝ Ս. Էջմիածնի Մայր Տաճարը, Ս. Հռիփսիմեն, Ս. Գայանեն, Ս. Շողակաթը, այլև բազմաթիվ եկեղեցիներ ու վանքեր Երևանում, Լենինականում, Գեղարդում, Արկազում, Հայաստանի այլ վայրերում և Հայաստանից էլ դուրս, Եղբայրական Վրաստանում, Ադրբեջանում, Հյուսիսային Կովկասի մի շարք վայրերում, Ռոստովում և այլն։

Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Կաթողիկոսի գահակալության առաջին իսկ օրերից նոր թափ են ստացել շինարարական աշխատանքները Մայր Աթոռում։ Վեհափառ Հայրապետի ղեկավարությամբ և անմիջական մասնակցությամբ կազմված են Մայր Աթոռի միջոցներով կատարվելիք վերանորոգման, վերականգնման և նոր շինարարական աշխատանքների երկու շատ լայն ծրագրեր.

1) Ս. Էջմիածնի Մայր Տաճարի, նրա հետ անմիջականորեն կապված օժանդակ շենքերի, այլև Ս. Հռիփսիմեի, Ս. Գայանեի և Ս. Շողակաթի.

2) Ս. Էջմիածնից դուրս, Հայաստանում, Վրաստանում, Ադրբեջանում, Հյուսիսային Կովկասում, Ռոստովում և այլ վայրերում գտնվող սրբավայրերի, այլև մի շարք ճարտարապետական հուշարձանների։

Այս երկու ծրագրերը սկսել են իրականացվել 1956—1957 թվականների ընթացքում։ 1958 թվականին պետք է իրականացվի այդ ծրագրերի շատ կարևոր մի մասը։ Սակայն դեռևս այդ ծրագրերից մնում են բազմաթիվ աշխատանքներ, որոնք պետք է կատարվեն հետագա տարիներին։

Ս. Էջմիածնի Մայր Տաճարում, Մայր Աթոռի կողմից կատարվող շինարարական աշխատանքները շարունակությունն են կազմում այն հիմնավոր, հսկա ու շնորհակալ աշխատանքի, որ կատարվեց Հայրենի կառավարության կողմից 1954—1955 թվականներին։ Մեր ճարտարապետության հայտնի դեմքերից մեկի, ճարտարապետ Ռ. Իսրայելյանի նախագծով պետք է ավարտվեն Մայր Տաճարի ներքին շինարարական աշխատանքները։ Գրեթե ավարտվել են հատակի մարմարապատման աշխատանքները։ 1958 թվականին ավարտվելու են Մայր Տաճարի բեմի, կից երկու խորանների հատակների մարմարապատման և թանգարանի հատակի մոզաիկայի աշխատանքները։ Շուտով պետք է սկսվի ճաղերի տեղադրումը Տաճարի ներսում Աղվերանի մարմարից, որը պետք է բաժանի դասը ատյանից։ Այս աշխատանքներին զուգընթաց պետք է կառուցվի Մայր Տաճարի Ավագ Սեղանը։ Վերջինը իրականացվելու է իտալական սպիտակ և փղոսկրի գույն ունեցող մարմարից, իր բովանդակությանը համապատասխանող զարդարանքներով։ 1958 թվականին նախատեսվում է վերակառուցել Մայր Տաճարի հարավային քանդված գմբեթը։ Հետագայում վերակառուցվելու է նաև Մայր Տաճարի ծածկը նոր, սրբատաշ քարերով, ներկա ցինկյա թիթեղի փոխարեն։



ԲՋՆԻԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԻՑ ԱՌԱՋ

Բազմաթիվ շինարարական աշխատանքներ են սկսված Մայր Աթոռում, մի շարք շնորհալի ճարտարապետների և ինժեներների նախագծերով, անվանի ճարտարապետ Մ. Դ. Մազմանյանի ընդհանուր ղեկավարությամբ։ Մայր Աթոռի կողմից Ս. Էջմիածնում կատարվող գրեթե բոլոր շինարարական աշխատանքները տեղում իրականացվում են 4-րդ շինարարական տրեստի 2-րդ շինարարական վարչության կողմից, վարչության պետ Հ. Ավագյանի և գլխավոր ինժեներ Ժ. Հովսեփյանի ղեկավարությամբ։

Արդեն ավարտվել են Մայր Տաճարն ընդգրկող հրապարակի և Վեհարանի առաջի մայթի սալահատակման աշխատանքները, Փարաքարի տուֆ քարից։ Շուտով կավարտվի Վեհարանի շենքի դարունակությունը կազմող թեք հարթության ճարտարապետական ձևավորումը քարե բազրիքներով և աստիճաններով, որոնք պետք է կապեն Սինոդի բակը Մայր Տաճարի հետ։ Թեք հարթությունը այս տարի պետք է կանաչազարդվի։

Սովետական կառավարության բարեհաճ համաձայնությամբ Մայր Աթոռին են վերադարձվել ոչ միայն նոր Վեհաշանի դենքը, այլև նրան ընդգրկող մի մեծ հողամաս։ Այժմ շատ բուռն ու ծավալուն աշխատանք է կատարվում այդ հողամասը պարսպապատելու (շուրջ 400 մ. երկարությամբ ու 4—5 մ. բարձրությամբ), Արթիկ տուֆի սրբատաշ քարից։ Ներկայումս նախագծվում են և շուտով կսկսվեն նոր Վեհարանի վերանորոգման աշխատանքները։ Այս մեծածավալ դենքը, որ կառուցված է մեր դարի սկզբներին, Մայր Տաճարի հիմնական առանցքի վրա, իրեն ընդգրկող հողամասով պետք է մտցվի Մայր Աթոռի ճարտարապետական ամբողջության մեջ։ Վեհարանը իր երկու հարկերում և նկուղում ունի 3 600 քառակուսի մետր օգտակար տարածություն։ Վեհարանը, բացի Գահասրահից, ընդունարաններից, բնակելի մասից, դիվանատնից, իրենց օժանդակ սենյակներով, ունենալու է նաև դահլիճ 300 տեղով, հյուրասենյակներ, ճեմասրահ, ճաշարան և սպասարկող խոհանոց իր բոլոր հարմարություններով։

Մոտիկ ժամանակները սկսվելու է Մայր Աթոռի տպարանի հին շենքի առաջին հարկի հիմնական նորոգությունը, որպեսզի 1958 թվականին կարելի լինի բաց անել տպարանը։ Երկրորդ հարկի վերակառուցումը կկատարվի 1959 թվականին։

1957 թվականին Մայր Աթոռի վերերկրյա շինարարական աշխատանքներին զուգընթաց սկսվել են հողամասի արտաքին կոյուղու և ջրամատակարարման աշխատանքները։ Հետագայում կառուցվելու է Ս. Էջմիածնի կոլեկտորը, բիոլոգիական մաքրման կայանով։ 1959 թվականին Մայր Աթոռում կառուցվելու են կաթսայատուն և էլեկտրական ենթակայան։ Այսպիսով Մայր Տաճարի հողամասի վրա գտնվող բոլոր շենքերը հնարավոր կլինի ապահովել սառը և տաք ջրամատակարարմամբ, կենտրոնական ջեռուցմամբ, կոյուղիով և էլեկտրական լուսավորությամբ։

1958 թվականի մայիսից սկսվելու են Խրիմյանի անվան թանգարանի և Ղազարապատի մեծածավալ շենքի վերակառուցման նախագծային աշխատանքները։ Ղազարապատը հիմնական վերակառուցման է ենթարկվելու։ Նրանում նախատեսվում է տեղավորել միաբանական ճաշարանը իր խոհանոցով և պահեստներով։

Տարեցտարի ավելանում է Հոգևոր Ճեմարանի ուսանողների թիվը և նրա պահանջները։ 1958 թվականին ծրագրված է վերակառուցել Հոգևոր Ճեմարանի շենքը՝ թևերում 2-րդ հարկ ավելացնելով։ Ուսանողության համար կառուցվելու է նոր հանրակացարան։

Նոր Վեհարանի վերանորոգությունից և Վեհափառ Հայրապետի այնտեղ տեղափոխվելուց հետո, վերակառուցվելու է հին Վեհարանը որպես թանգարան, նվիրված Հայ Եկեղեցու պատմության։

Մայր Տաճարի հողամասից դուրս ծրագրված է կառուցել նոր հիվանդանոցի շենք Մայր Աթոռի համար, որն իր մեջ պետք է ունենա նաև կլինիկա ու դեղատուն։

Վերջերս սկսվել են սալահատակման աշխատանքներ հայ ճարտարապետության ամենանշանավոր հուշարձաններից մեկի՝ Ս. Հռիփսիմեի դուրջը։ Այդ աշխատանքներ ավարտվելու են 1958 թվականին։ Քանդվելու, հեռացվելու է Ս. Հռիփսիմեի տաճարի ներսի ծեփը՝ նրա նախնական վեհ տեսքը վերականգնելու համար։ Պատրաստվելու և բարեկարգվելու է նրա հողամասը։ Գրեթե նման ձևով վերակառուցվելու են Ս. Էջմիածնի մյուս սրբավայրերը՝ Ս. Գայանեն, Ս. Շողակաթը։ Պարապատվելու և բարեկարգվելու է Ս. Էջմիածնում գտնվող կաթողիկոսների և միաբանների գերեզմանատունը։

Արդյոք թվարկված բազմաթիվ շինարարական աշխատանքներով սպառեցի՞նք այն մեծ ծրագիրը, որի իրականացմանը վարակող խանդավառությամբ և անվերապահորեն նվիրվել է «շինարար» անունը իրավամբ վաս-

տակած մեր Վեհափառ Հայրապետը։ Ո՛չ, դա մեր ընդհանուր ծրագրի միայն առաջին մասն է հանդիսանում։

Արտասահմանից եղած անհատական նվիրատվություններով արդեն 1957 թվականին հիմնականում վերակառուցվել է Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցին։ Պետք է հիմնական վերանորոգման ենթարկվի Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոցի անունը կրող եկեղեցին, ինչպես նաև եկեղեցու սեղանի ներքև գտնվող շիրիմը, որի տակ հանգչում է Հայ Ազգի ամենախոշոր լուսավորչի՝ հայ տառերի ստեղծողի աճյունը։ Վերակառուցվելու և վերանորոգվելու են նաև պատմական Խոր Վիրապի վանքը և Ս. Շողակաթի եկեղեցին։

Մենք վերանորոգման, վերակառուցման և նոր օժանդակ շենքերի շինարարության հրակայական ծրագրեր ունենք Գեղարդի և Արկազի վանքերում, Երևանի, Լենինականի, Նոր Բայազետի, Մրգավանի եկեղեցիներում, այլև եղբայրական Վրաստանում, Ադրբեջանում, Հյուսիսային Կովկասի մի շարք վայրերում, Ռուսաստանում գտնվող հայկական եկեղեցիներում։ Այս աշխատանքները մեր մեծ ծրագրի երկրորդ մասն են կազմում։

Մայր Աթոռի պատվերով Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից ճարտարապետական գործերի վարչության Հատուկ գիտական ռեստավրացիոն արվեստանոցը, համաձայն իր կողմից կազմած նախագծի և նախահաշվի, 1957 թվականի ընթացքում տեղում իրականացրել է մեր ծրագրի երկրորդ մասում հիշված յավագույն հուշարձաններից մեկի՝ Բջնիի Ս. Աստվածածին եկեղեցու և կից զանգակատան վերականգնման աշխատանքները։ Վերականգնված են արտաքին պատերի երեսապատերը և քիվերը։ Բոլոր լանջերի, ինչպես և թումբերի տանիքների ջարդված կամ մաշված քարերը փոխարինվել են նոր, ձևավոր տեղական չափածո քարերով։ Էլի մի քանի աշխատանքներ են մնում կատարելու 1958 թվականին, որոնք մատնանշված են հանձնման-ընդունման հանձնաժողովի կողմից։



ԲՋՆԻԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Թիթեղապատման, ներքին ծեփի նորոգման և ներկարարական աշխատանքներ են կատարվել Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան եկեղեցում, Երևանի Ս. Հովհաննես և Ս. Գորավոր եկեղեցիներում։ Այս աշխատանքները կրում են ժամանակավոր բնույթ և կատարված են շտապողական կերպով, խիստ անհրաժեշտ լինելու հետևանքով։

Մեր ծրագրի երկրորդ մասում մտցված են նաև պատմական մեծ արժեք ներկայացնող ճարտարապետական հուշարձանների մի մասի վերանորոգումը և վերակառուցումը։ Այդ թվում մտցված են Մակարավանքը, Հառիճա վանքը, Արազի մեծ եկեղեցին, Տաթևի անկրկնելի վանքը՝ Ս. Ստեփանոսի ու Ս. Նշանի եկեղեցիների հետ մեկտեղ, Կարմիր վանքը (Նախիջևան), Գնդեվազի Ս. Ստեփանոսի եկեղեցին և գավիթը, Նորավանքը, Որոտնավանքը, Գանձասարի վանքը և այլն։ Այս հուշարձանների, ինչպես նաև մյուս եկեղեցիների և վանքերի վերանորոգման և վերակառուցման աշխատանքներում անմիջական գործնական մասնակցություն Մայր Աթոռի աշխատանքներին պետք է ցուցաբերի Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Ճարտարապետական գործերի և հուշարձանների պահպանության վարչությունը, հանձինս վարչության պետ Ռ. Բ. Ագիգբեկյանի, վարչության բաժնի վարիչ Կ. Լ. Հովհաննիսյանի, Հատուկ գիտական ռեստավրացիոն արվեստանոցի միջոցով, որի դիրեկտորն է Ս. Ե. Պետրոսյանը։



ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄԱՍԸ, ՈՐՏԵՂ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎԵԼՈՒ Է ԳՄԲԵԹԸ



ԴԵՊԻ ՍԻՆՈԴԻ ՆԱԽԿԻՆ ՇԵՆՔԸ ՏԱՆՈՂ ԱՍՖԱԼՏԱՊԱՏ ԱՆՑՈՒՂԻՆ ԵՎ ԹԵՔ ՀԱՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԻՐ ԱՍՏԻՃԱՆՆԵՐՈՎ

Հասկանալի է, որ այս մեծ ծրագրի իրականացումը կպահանջի միլիոնների ներդրում։ Մեր կառավարության հոգատարությունը մեզ անհրաժեշտ շինանյութերով ապահովելու խնդրում, Սփյուռքի հայերի առատաձեռն նվիրատվությունները ու է՛լ ավելի մեծ սպասելիքները, մեր սրտերը լցնում են հույսի, համոզմունքի հաճելի զգացմունքներով, մեր լայն ծրագիրը իրականացնելու համար։

Ստորև բերում ենք Մայր Աթոռում 1957 թվականին կատարված շինարարական աշխատանքների ընդհանուր պատկերը և 1958 թվականին կատարվելիք աշխատանքների ծրագիրը.

1957 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԱՍԿԵՐԸ

№№ ը/կ	Շենքի կամ կառուցվածքի անունը և նրա վրա կատարված աշխատանքը	Միավորի չափը	Քանակը	Արժեքը ռուբլիներով
1	Մայր Տաճարի ներսում ջրհորի մարմարյա խուփի տեղադրումը և ճատակում բաղնված փոսերի ծածկումը օրգանական ապակիով	ք. մ.	4	6 000
2	Մայր Տաճարի շուրջը և Վեհարանի առաջ ընկած մայթի ապահատակումը	ք. մ.	2 950	277 000
3	Վեհարանի շարունակությունը կազմող բեմ հարթության ձևավորումը քարե բազրիքներով և աստիճաններով . . .	մ.	72	111 000
4	Պարապատում նոր Վեհարանի բակի հարավ-արևմտյան կողմից	%	63	339 000
5	Սալաճատակում Ս. Հռիփսիմեի տաճարի շուրջը . . .	%	15	16 000
6	Ս. Հռիփսիմեի բակում բնակելի շենքի վերանորոգումը . .	խ. մ.	1 800	42 000
7	Մայր Տաճարի բակում կոյուղու մասնակի անցկացում . .	%	40	35 000
8	Մայր Տաճարի բակի անցուղիների և մայթերի ասֆալտապատում	ք. մ.	1 800	70 000
9	Ջրնիի Ս. Աստվածածին եկեղեցու դրսի պատերի նորոգում և տանիքի քարե սալերի լրիվ փոփոխում	ք. մ.	407	167 000
10	Զանազան մասնակի նորոգություններ Հոգևոր Ճեմարանի, Սինոդի և Երեմիայի շենքերում և բակի զուգարաններում . .	—	—	39 000
11	Զանազան մասնակի նորոգություններ Երևանի Ս. Գրիգոր և Ս. Հովհաննես եկեղեցիներում	—	—	22 000
12	Արկազի Ս. Խաչ վանքի եկեղեցու մասնակի վերանորոգում և կից բնակելի շենքի պատերի շարում	—	—	12 000
13	Նախագծային աշխատանքներ	—	—	30 000
	Ընդամենը՝			1 166 000

ՄԱՆՈՒԹ.— 1956 թվականի ընթացքում Մայր Աթոռի կողմից կատարված շինարարական աշխատանքները այս ցուցակում չեն մտցված։

1958 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՆՈՐ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

№№ ը/կ	Շենքի կամ կառուցվածքի անունը և նրա վրա կատարված աշխատանքը	Միավորի չափը	Քանակը	Մոտավոր արժեքը ռուբլիներով
	Ա.) Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ			
1	Ավագ Սեղանի կառուցում զարդաքանդակներով, իտալական մարմարից	ք. մ.	40	250 000
2	Ավագ Սեղանի շուրջը—բեմի, աստիճանների, խորանների և բանգարանի հատակների մարմարապատում և մոզաիկա . .	ք. մ.	180	180 000
3	Դասը ատյանից բաժանող ճաղերի կառուցումը Մայր Տաճարի ներսում Աղվերանի մարմարից	մ.	15	120 000
4	Հարավային փլած գմբեթի վերակառուցում ամբողջությամբ, կրաղ պատերի ամրացմամբ .	ճաս	1	800 000

Հ Հ ը/կ	Շենքի կամ կառուցվածքի անունը և նրա վրա կատարված աշխատանքը	Միավորի չափը	Քանակը	Մոտավոր արժեքը ռուբլիներով
	Բ) ՇԵՆՔԵՐ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՀԱՂԱՄԱՍՈՒՄ ԵՎ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ			
5	Նոր Վեճարաճի շենքի արմատական վերակառուցում՝ ջրամատակարարման, կենտրոնական ջեռուցման և կոյուղու անցկացմամբ (շինարարական աշխատանքների 50%-ը)	խ. մ.	27 323	1 200 000
6	Նույնը ապարանի շենքի միայն առաջին հարկում, մեքենաների տեղադրմամբ	խ. մ.	6 000	150 000
7	Նույնը Հոգևոր ճեմարանի շենքում, նրա միանարկ բեռների վրա 2-րդ հարկի կառուցմամբ	խ. մ.	8 000	400 000
8	Մայր-Տաճարի հյուսիս-արևելյան պարիսպների վերակառուցում և հրապարակային ժամացույցի աշտարակի կառուցում	—	—	150 000
9	Մայր Տաճարի բակի սանմանեներում կոյուղու ավարտում (40%-ը կատարված է)	%	60	55 000
10	Նոր Վեճարաճի շենքի հյուսիս-արևմտան կողմի պարապատման ավարտումը (53%-ը կատարված է)	%	37	200 000
11	Մայր Տաճարի բակի մասնակի ծառապատում և կանաչազարդում	%	20	50 000
12	Ս. Հռիփսիմեի տաճարի շուրջի և անցուղիների սալանստակման ավարտումը և տաճար տանող աստիճանների վերակառուցումը	%	85	100 000
13	Տաճարի հերսի ծեփի քանդումը՝ նրա նախնական տեսքը վերականգնելու նպատակով	ք. մ.	2 000	80 000
	Գ) ՇԵՆՔԵՐ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ Ս. ԷՋՄԻԱԾՆԻՑ ԴՈՒՐՍ			
14	Խոր Վիրապի վանքի ջրամատակարարումը և մուտքի բաղի ու Խոր Վիրապի եկեղեցու վերակառուցումը	—	—	150 000
15	Արկազի Ս. Խաչ վանքի եկեղեցու արմատական վերանորոգումը (գոներ, լուսամուտներ, հատակ և տեղան) և սկսված բնակելի տան ավարտումը	—	—	140 000
16	Նոր Բայազետի Ս. Աստվածածին եկեղեցու տանիքի և գմբեթի ծպեղի և թիթեղի ամբողջական վերափոխումը	ք. մ.	600	60 000
17	Նույնը Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցում	ք. մ.	600	60 000
18	Բշկինի Ս. Աստվածածին եկեղեցու հերսի հաղերի, դռների, տեղանների վերակառուցումը, դրսի պատերի մաքրումը ցեմենտի ծեփից և պարապի մուտքի կարգավարումը	—	—	40 000
19	Օշականի Ս. Մաշտոցի եկեղեցու բակի մասնակի պարապատումը և Ս. Մեսրոպի շիրմի ձևավորումը	—	—	175 000
20	Ս. Գեղարդա վանքի բակի կարգավորումը, մասնակի սալանստակումը և Վիմափոր եկեղեցու հատակի կարգավորումը, հոսող ջրի հեռացմամբ	ք. մ.	550	70 000
21	Երևանի Ս. Զորավոր եկեղեցու տեղանի կառուցումը	ք. մ.	30	20 000
22	Նախագծային և նախաճաշվային աշխատանքներ	—	—	50 000
	Ընդամենը՝			4 000 000

ՄԱՆՈՒՐ.— Նախատեսված աշխատանքների ճշգրիտ արժեքները կորոշվեն նախագիծ և նախահաշիվ կազմելուց հետո։